«Խարաջ-ի մուվազաֆը» վճարելու էր ոչ մուսուլմանը հողօգտագործման համար: Սակայն, հաճախ «խարաջ-ի մուվազաֆ»-ը քրիստոնյաներից վերցնում էին այն ժամանակ, երբ հողը չէր մշակվում[1]:

16—17-րդ դարերում Թուրքիայում «խարաջ»-ը կորցրել էր իր սկզբնական նշանակությունը, որպես հողային հարկի և «խարաջ» անունը դարձել էր հպատակներից գանձվող պետական բազմաթիվ հարկերն արտահայտելու հավաքական տերմին:

Այս վերջին հանգամանքը հնարավորություն էր տալիս ժողովրդի բացարձակ կողոպտման: Այսպես՝ Կարամանիայի վիլայեթի կանուն-նամեում ասված է, որ խարաջ հավաքող պետական պաշտոնյաները իրենց ձիերով բեռ են դարձել հարկատուներին, իջևանելով նրանց տներում, և որ «օրենքը նրանց այդ բանում չի սահմանափակել»: Իսկ նրանց մեկնումից հետո նորանոր հարկապահանջներ եկել պահանջել են նոր խարաջ, որի հետևանքով ռայեթը բողոքել է, ցույց տալով, որ վճարված է տասը տարվա խարաջ[2]:

Խարաջ վճարվող գումարի չափը միշտ եղել է փոփոխական: 15-րդ դարի կեսերից սկսած Թուրքիայում որպես խարաջ գանձվող հարկի գումարը, ըստ պատմագիր Օրուջ Ադիլի, կազմել է 50 ակչե[3], և որ այդ գումարի չափը «այդ օրվանից էլ այդպես մնացել է», այսինքն մինչև 16-րդ դարը՝ հեղինակի ապրած ժամանակաշրջանը[4]:

Կայսերլեի (Կեսարիա) 16-րդ դարի սկզբի (1500) կանուն-նամեի համաձայն պետք է գանձվեր «յուրաքանչյուր անհավատից 26 ակչե խարաջ»[5]: Հայաստանի որոշ մասերում խարաջի փոխարեն երբեմն ստիպել են կատարել պարտադիր պարիակային աշխատանք: Այսպես, Վանում, Էվլիա Չելեպիի ասելով, «երեք հայկական թաղերի բնակիչները պարտավոր են իրենց խարաջի փոխարեն մշտապես նորոգել բերդը»[6]:

Սակայն, Թուրքիայում, ինչպես և այլ մուսուլմանական երկրներում, քրիստոնյա հպատակներից գանձվող ու ստորացուցիչ բնույթ ունեցող հարկը «ջիզիեն» էր (գլխահարկը):

Ըստ մուսուլմանական շարիաթի ջիզիեից ազատ էին՝ կանայք, երեխաները, ստրուկները, ծերերը, կրոնավորները, ընչազուրկները:

---

[1] *В. Д. Чемерзин*, Турция, её могущество и распадение, СПб, 1874, стр. 312.

[2] Kanun-nâme-i vilayet-i karaman (Omer Lûtfi Barkan. *հիշյալ աշխատությունը*, s. 59)

[3] *Ակչեն* (akçe) *թուրքական արծաթե դրամի միավոր է: Ակչե թուրքերեն նշանակում է սպիտակավուն: Օսմանյան առաջին ակչեները հավասար էին մեկ քառորդ մսխալի, իսկ մսխալը հավասար էր 4,8 դրամի* (*Y. H. Uzunçarşılı*, Osmanlı devleti teşkilâtından kapukulu ocakları, Ankara, 1942, s. 464,

Սուլթան Սելիմ Յավուզի ժամանակ վաթսուն օսմանյան ակչեն հավասար էր մի օսմանյան ոսկու (նույն տեղ, էջ 467): Սուլթան Սուլեյման Կանունիի ժամանակ հարյուր դիրհեմ արծաթից 500 ակչե է կտրվել: Հետևաբար, մեկ դիրհեմ արծաթը հավասար է եղել 5 ակչեի, (նույն տեղում):

[4] *Oruc, Adil* Tevarih- 'Ali Osman, Hanover, 1925, s. 46. *Հայկական աղբյուրներում «խարաջ» տերմինն օգտագործվում է բացառապես «ջիզիե» իմաստով (տե՛ս Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հատ. II, Երևան, 1956, էջ 270, 381, 382, 417, 420, 483, 517 և այլն):*

[5] Kayseriye kanunu (O. L. Barkan, s. 56).

[6] *Evlia Çelebi*, Siyahetnâme, cilt IV, s, 183.